ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ «ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԵՐԵՎԱՆ-2016

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Օրենսդրական գործող կարգավորումների պայմաններում պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասով առևտրային կազմակերպությունների գործունեության ղեկավարման գործընթացում խորհուրդների իրավասության շրջանակը լայն է, ինչով պայմանավորված, դրանց ազդեցությունը կազմակերպության գործունեության արդյունքների վրա զգալի է:

Նշված գործընթացում առավել մեծ ազդեցություն ունեն խորհրդի նախագահ, անդամ կամ լիազոր ներկայացուցիչ հանդիսացող *բարձրաստիճան պաշտոնատար անձինք,* որոնք ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումից զատ, կրում են նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 23-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ռիսկերը:

Օրենքի 24-րդ հոդվածի դրույթների իրացման գործընթացում գործնականում առաջ են գալիս բարդություններ՝ պայմանավորված, մասնավորապես, կառավարման ոլորտում վարչական և առևտրային գործունեությունների սահմանազատման հետ:

Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործառույթներից են բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման բացահայտումը (բացառությամբ պատգամավորների, սահմանադրական դատարանի անդամների, դատավորների և դատախազների շահերի բախման) և էթիկայի կանոնների խախտման բացահայտումը (բացառությամբ սահմանադրական դատարանի անդամների, դատավորների և դատախազների պաշտոնեական լիազորությունների իրականացմանն առնչվող էթիկայի կանոնների խախտումների, ինչպես նաև պատգամավորների կողմից էթիկայի կանոնների խախտումների) և դրանց վերացմանն ու կանխարգելմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը Հանրապետության Նախագահին, Ազգային ժողով, կառավարություն:

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից Օրենքի 24-րդ հոդվածի պահանջներին հետևելու պրակտիկան ամփոփելու *նպատակով* Հանձնաժողովն

իրականացրել է «Բարձրաստիճան պաշտոնատար անձի այլ գործունեության սահմանափակումները» թեմայով ուսումնասիրություն, որի շրջանակներում *հիմնական շեշտադրումը կատարվել է* բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու, կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելու կամ որևէ այլ ձևով կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը ներգրավված լինելու վերաբերյալ սահմանափակմանը հետևելու վրա:

Այդ կապակցությամբ, անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով Հանձնաժողովը գրություններ է ուղարկել մի շարք հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների և մարզպետներին:

Ուսումնասիրության առարկա են հանդիսացել ՀՀ կառավարության՝ համապատասխանաբար՝ 2010 թվականի ապրիլի 29-ի «Պետական գույքի կառավարումը համակարգելու մասին» N 474-Ն, 2003 թվականի նոյեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների 2003-2007 թվականների ֆինանսական առողջացման ծրագրի ու 2003-2007 թվականների ֆինանսական հոսքերի կանխատեսումների և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն և 2012 թվականի փետրվարի 2-ի «Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի կառավարման՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների ընտրության մրցույթի անցկացման, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի կառավարման՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների աշխատանքների գնահատման կարգը, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների հետ կնքվող աշխատանքային օրինակելի պայմանագիրը և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների աշխատանքների գնահատման համար անհրաժեշտ հաշվետվության օրինակելի ձևը հաստատելու մասին» N 175-Ն որոշումների դրույթները:

Հարկ է նկատի ունենալ, որ Օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները վերաբերում են նաև հանրային ծառայողներին:

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ՝ ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Օրենքի 24-րդ հոդվածով սահմանված են բարձրաստիճան պաշտոնատար անձի այլ գործունեության սահմանափակումները:

Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը *չի կարող* անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական կամ ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից, բացառությամբ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ օրենքի իմաստով *ձեռնարկատիրական գործունեություն է համարվում*՝

1) անհատ ձեռնարկատեր լինելը.

2) առևտրային կազմակերպության մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման.

3) առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելը, առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը կամ որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:

Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետով ամրագրված է, որ օրենքի իմաստով *ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում* 75 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ առևտրային կազմակերպության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհուրդ) կազմում ընդգրկված լինելը, եթե այն ուղղակիորեն առնչվում է հանրային ծառայողի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնավարման ոլորտի քաղաքականության իրականացման հետ՝ առանց վարձատրության կամ որևէ այլ

ձևով փոխհատուցում ստանալու կամ ոչ հանրային ծառայողների կամ բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար նախատեսված սոցիալական երաշխիքներից կամ այլ ծառայություններից կամ արտոնություններից օգտվելու իրավունքի:

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ «ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ» ԿԻՐԱՐԿՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Ի պատասխան Հանձնաժողովի գրության, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, տրամադրվել է տեղեկատվություն, համաձայն որի՝ *2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ* Հայաստանի Հանրապետությունում գործել են 50 տոկոս և ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող 397 ընկերություններ, որոնց կառավարումն իրականացվել է 16 նախարարությունների (ներառյալ՝ ՀՀ կառավարության աշխատակազմը), ՀՀ կառավարությանն առընթեր 6 մարմինների և 10 մարզպետների կողմից:

Վերոնշյալ 32 մարմիններից ստացված տեղեկատվության ամփոփման արդյունքներով *17 մարմիններում* որևէ բարձրաստիճան պաշտոնատար անձ համապատասխան մարմնի համակարգում գործող առևտրային կազմակերպությունում պաշտոն չի զբաղեցրել կամ ներգրավված չի եղել համակարգում գործող առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը:

15 մարմիններից ստացված տեղեկատվությունը վկայում է, որ *50 տոկոս և ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների* կառավարումն իրականացվել է երկու հիմնական ձևերով՝

ա) պետական բաժնեմասի կառավարման՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների.

բ) ընկերությունների կառավարման խորհուրդների միջոցով:

Կոտայքի և Վայոց Ձորի մարզային ենթակայության առողջապահական ՓԲԸ-ների, ՀՀ գյուղատնտեսության, աշխատանքի և սոցիալական հարցերի, բնապահպանության, արդարադատության, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների և ՀՀ կառավարությանն առընթեր

ոստիկանության համակարգում գործող ՓԲԸ-ների կառավարումն իրականացվել է պետական բաժնեմասի կառավարման՝ *պետության կողմից լիազորված ներկայացուցիչների* ինստիտուտի միջոցով:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, քաղաքաշինության, էկոնոմիկայի, կրթության և գիտության նախարարությունների և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության համակարգում գործող ՓԲԸ-ների կառավարումն իրականացվել է *ընկերությունների կառավարման խորհուրդների* միջոցով:

Ընդ որում, պետական բաժնեմասի կառավարման՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների և ընկերությունների կառավարման խորհուրդների նախագահների կամ անդամների պաշտոնները զբաղեցրել են առավելապես նախարարները, փոխնախարարները, մարզպետները, նրանց տեղակալները, ՀՀ կառավարությանն առընթեր մարմինների ղեկավարները և նրանց տեղակալները:

ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի *«Պետական գույքի կառավարումը համակարգելու մասին»* N 474-Ն որոշման 7-րդ կետով սահմանված է, որ 50-ից ավելի տոկոս պետական մասնակցությամբ այն առևտրային կազմակերպություններում, որոնց բաժնետոմսերի տնօրինման լիազորությունները վերապահված են համապատասխան մարմիններին, ստեղծվող տնօրենների խորհրդի կազմում ընդգրկվում են ներկայացուցիչներ տվյալ պետական կառավարման մարմնից, ՀՀ ֆինանսների նախարարությունից և ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունից, իսկ խորհրդի նախագահը պետք է լինի տվյալ մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը, բացառությամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության, որում խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի անդամների կողմից օրենքով սահմանված կարգով:

ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի *«Հայաստանի Հանրապետության էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների 2003-*

2007 թվականների ֆինանսական առողջացման ծրագրի ու 2003-2007 թվականների ֆինանսական հոսքերի կանխատեսումների և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն որոշման 4-րդ կետի «բ» և «դ» ենթակետերին համապատասխան՝ էներգետիկայի ոլորտի ընկերությունների ներկայացուցիչների վարձատրությունը պետք է իրականացվի ներկայացնող ընկերությունների հաշվին, իսկ տնօրենների խորհուրդների անդամների վարձատրությունը և գործունեության հետ կապված մյուս ծախսերը (քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող՝ տնօրենների խորհուրդների անդամների գործունեության հետ կապված ծախսերը փոխհատուցվում են օրենքով սահմանված կարգով) նախատեսվում են ընկերությունների վարչական աշխատակազմերի պահպանության ծախսերի նախահաշիվներում:

Վերոշյալ որոշման Հավելված N 1-ի 6-րդ կետի համաձայն՝ տնօրենների խորհրդում աշխատանքը պետք է վճարովի լինի, իսկ խորհրդի անդամների վարձատրության չափը պետք է համարժեք լինի Հանրապետության խոշոր մասնավոր ընկերությունների բարձրագույն ղեկավարության վարձատրության չափին:

ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի *«Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի կառավարման՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների ընտրության մրցույթի անցկացման, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի կառավարման՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների աշխատանքների գնահատման կարգը, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների հետ կնքվող աշխատանքային օրինակելի պայմանագիրը և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների աշխատանքների գնահատման համար անհրաժեշտ հաշվետվության օրինակելի ձևը հաստատելու մասին»* N 175-Ն որոշմամբ նախատեսված է, որ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում պետական բաժնեմասի

կառավարման՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչը մրցութային կարգով ընտրված (բացառությամբ մինչև 50 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների) և համապատասխան աշխատանքային պայմանագիր կնքած անձն է, որը պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում իրականացնում է պետությանը (բաժնետիրոջը) վերապահված իրավասությունները և գործում է ի շահ պետության (բաժնետիրոջ) (կետ 1, ենթակետ 1):

Վերոշյալ որոշման Հավելված N 1-ի 3-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում, ելնելով առևտրային կազմակերպությունների առանձնահատկություններից և գործունեության բնույթից, պետական կառավարման համապատասխան մարմնի առաջարկությամբ, լիազոր ներկայացուցիչներ կարող են նշանակվել ՀՀ կառավարության որոշմամբ, իսկ 3.1.-րդ կետի համաձայն՝ մինչև 50 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում լիազոր ներկայացուցիչները սահմանված կարգով նշանակվում են ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետի հրամանով՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ վարչապետի հետ:

Նույն որոշման Հավելված N 1-ի 4-րդ կետին համապատասխան՝ լիազոր ներկայացուցչի վարձատրության չափը սահմանվում է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության կողմից:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Հանձնաժողովն *առաջարկում է* ՀՀ կառավարությանը քննարկման առարկա դարձնել՝

1) ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի «Պետական գույքի կառավարումը համակարգելու մասին» N 474-Ն որոշման 7-րդ կետի դրույթի (պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների տնօրենների խորհրդի նախագահը պետք է լինի տվյալ մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը...) վերանայման հարցը՝ այն համապատասխանեցնելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի (հանրային ծառայողը և բարձրաստիճան պաշտոնատար անձը չեն կարող անձամբ զբաղվել

ձեռնարկատիրական գործունեությամբ) և նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի (ձեռնարկատիրական գործունեություն է համարվում... որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը) պահանջներին՝ նկատի ունենալով նաև վերոնշյալ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի դրույթները (ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում ...75 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ առևտրային կազմակերպության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհուրդ) կազմում ընդգրկված լինելը, եթե այն ուղղակիորեն առնչվում է հանրային ծառայողի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնավարման ոլորտի քաղաքականության իրականացման հետ).

2) ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների 2003-2007 թվականների ֆինանսական առողջացման ծրագրի ու 2003-2007 թվականների ֆինանսական հոսքերի կանխատեսումների և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն որոշման 4-րդ կետի «բ» ենթակետի (ընկերությունների ներկայացուցիչների վարձատրությունը պետք է իրականացվի ներկայացնող ընկերությունների հաշվին) և «դ» ենթակետի (տնօրենների խորհուրդների անդամների վարձատրությունը և գործունեության հետ կապված մյուս ծախսերը նախատեսվում են...), ինչպես նաև որոշման Հավելված N 1-ի 6-րդ կետի (տնօրենների խորհրդում աշխատանքը պետք է վճարովի լինի, իսկ խորհրդի անդամների վարձատրության չափը պետք է համարժեք լինի Հանրապետության խոշոր մասնավոր ընկերությունների բարձրագույն ղեկավարության վարձատրության չափին) դրույթների վերանայման հարցը՝ դրանք համապատասխանեցնելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի (հանրային ծառայողը և բարձրաստիճան պաշտոնատար անձը չեն կարող կատարել այլ վճարովի աշխատանք) և նույն հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի (ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում ...75 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ առևտրային կազմակերպության տնօրենների խորհրդի

(դիտորդ խորհուրդ) կազմում ընդգրկված լինելը՝ առանց վարձատրության կամ որևէ այլ ձևով փոխհատուցում ստանալու ...) պահանջներին.

3) ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի «Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի կառավարման՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների ընտրության մրցույթի անցկացման, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի կառավարման՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների աշխատանքների գնահատման կարգը, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների հետ կնքվող աշխատանքային օրինակելի պայմանագիրը և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների աշխատանքների գնահատման համար անհրաժեշտ հաշվետվության օրինակելի ձևը հաստատելու մասին» N 175-Ն որոշման մեջ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում պետական բաժնեմասի կառավարման՝ պետության կողմից լիազորված ներկայացուցիչների ընտրության մրցույթներին հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասնակցությունը, ինչպես նաև արտամրցութային կարգով նրանց նշանակումները բացառող դրույթ նախատեսելու վերաբերյալ հարցը՝ հաշվի առնելով, մի կողմից, այդ կապակցությամբ ձևավորված պրակտիկան և, մյուս կողմից, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 3-րդ մասի 8-րդ կետի պահանջները: